

----- ընկերության էլեկտրական էներգիայի
(հզորության) արտադրության ԼԷ №0---- լիցենզիայի

ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

1. ԼԻՑԵՆԶԻԱՅԻՆ ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՀԱՄԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Սույն լիցենզիայում օգտագործված հիմնական հասկացություններն են.

- 1) **Առևտրային կանոններ`** Հանձնաժողովի կողմից հաստատված` Հայաստանի Հանրապետության էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայի առևտրային կանոններ, որոնք կանոնակարգում են էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայի մասնակիցների առևտրային փոխհարաբերությունները.
- 2) **Էլեկտրական էներգիայի սակագին`** սույն լիցենզիայի պայմանների №1 հավելվածի համաձայն` Լիցենզավորված անձի համար միադրույք սակագնային համակարգում սահմանված` առաքված էլեկտրական էներգիայի սակագինը.
- 3) **Լիցենզավորված անձ`** ----- ընկերություն.
- 4) **Հանձնաժողով`** Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով.
- 5) **Հաշվարկային ժամկետ`** Ներկայացման ամսին հաջորդող տասներկու շարունակական ամիսներից բաղկացած ժամանակահատված.
- 6) **Ներկայացման ամիս`** համապատասխան Հաշվարկային ժամկետի համար էլեկտրական էներգիայի սակագնի սահմանման համար Հանձնաժողովի որոշման նախագիծը Հանձնաժողովի նիստին ներկայացնելու օրացուցային ամիսը.
- 7) **Շուկայի կանոններ`** Հանձնաժողովի հաստատած էլեկտրաէներգետիկական շուկայի առևտրային և ցանցային կանոններ.
- 8) **Պաշտոնական փոխարժեք`** որոշակի ժամանակահատվածի համար Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից հրապարակված` հայկական դրամով արտահայտված մեկ ԱՄՆ դոլարի միջին փոխարժեքի մեծությունը.
- 9) **Սղաճ`** Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից որոշակի ժամանակահատվածի համար հրապարակված սպառողական գների ինդեքսն է.
- 10) **Ցանցային կանոններ`** Հանձնաժողովի կողմից հաստատված Հայաստանի Հանրապետության էլեկտրաէներգետիկական համակարգի ցանցային կանոններ, որոնք կանոնակարգում են հաղորդման և բաշխման ցանցերի զարգացման

այլանավորման, կառավարման, կարգավորման և այդ ցանցեր մուտքի ապահովման հետ կապված հարաբերությունները:

2. ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՎ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՎԱԾ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԸ (ՎԱՅՐԸ)

2. Սույն լիցենզիան ուժի մեջ է մտնում -----ից:

3. Սույն լիցենզիան գործում է մինչև -----, որից`

1) մինչև */լրացվում է համաձայն ՊՄԳ գործարքում ամրագրված ժամկետի/* կառուցման ժամանակահատվածն է,

2) մինչև */հավասար է կառուցման ժամանակահատված+20 տարի/* էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության գործունեության իրականացման ժամանակահատվածը:

4. Սույն լիցենզիայի` սույն գլխով նախատեսված ժամանակահատվածի (ժամկետի) երկարաձգման անհրաժեշտության դեպքում Լիցենզավորված անձը Հանձնաժողովի կողմից սահմանված կարգով և ժամկետներում համապատասխան հայտ է ներկայացնում Հանձնաժողով:

5. Լիցենզավորված գործունեության իրականացման աշխարհագրական տարածքը (գործունեության վայրը) *Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Թալին և Դաշտադեն համայնքների վարչական տարածքներն են:*

3. ԼԻՑԵՆԶԱՎՈՐՎԱԾ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԷՈՒԹՅՈՒՆԸ ԿԱԶՄՈՂ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

6. Լիցենզավորված անձին իրավունք է տրվում և պարտավորեցվում է սույն լիցենզիայով սահմանված ժամկետում (ժամանակահատվածում) կառուցել */լրացվում է համաձայն ՊՄԳ գործարքի/* ՄՎտ տեղակայվող (դրվածքային) հզորությամբ «Այգ-1» արևային ֆոտովոլտային էլեկտրակայանը (այսուհետ` Կայան), արտադրել էլեկտրական էներգիա (հզորություն):

7. Լիցենզավորված անձին իրավունք է տրվում`

1) մեծածախ շուկայում վաճառել կամ արտահանել իր արտադրած էլեկտրական էներգիան (հզորությունը)` Շուկայի կանոնների համաձայն,

2) էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայում գնել էլեկտրական էներգիա (հզորություն), եթե սեփական արտադրության էլեկտրական էներգիայով չի կարողանում կատարել իր պայմանագրային պարտականությունները:

8. Լիցենզավորված անձը Հանձնաժողովի սահմանած սակագներով պարտավոր է էլեկտրական էներգիա վաճառել երաշխավորված մատակարարին, մատակարարներին և որակավորված սպառողներին` Շուկայի կանոններով նախատեսված դեպքերում և կարգով: Մնացած դեպքերում Լիցենզավորված անձը

Էլեկտրական էներգիան կարող է վաճառել շուկայի մասնակիցներին կամ արտահանել չկարգավորվող գներով:

9. Լիցենզավորված անձը էլեկտրական էներգիան կարող է օգտագործել սեփական կարիքների համար՝ միայն էլեկտրական էներգիայի արտադրության հետ կապված պահանջների բավարարման համար, եթե այլ բան սահմանված չէ Շուկայի կանոններով կամ Լիցենզավորված անձի հետ պետություն-մասնավոր գործընկերության շրջանակում կնքված գործարքով:

10. Հանձնաժողովի կողմից Կայանից առաքվող էլեկտրական էներգիայի սակագինը սահմանվում և վերանայվում է պետություն-մասնավոր գործընկերության շրջանակում -----ին Հայաստանի Հանրապետության կառավարության և -----ի միջև կնքված Հայաստանում՝ Արագածոտնի մարզի Թալին և Դաշտադեմ համայնքների միջև Կայանի նախագծման, ֆինանսավորման, կառուցման, սեփականության իրավունքով տիրապետման և շահագործման մասին կառավարության աջակցության մասին կառավարության աջակցության համաձայնագրի հիման վրա՝ համաձայն սույն լիցենզիայի պայմանների N1 հավելվածի:

11. Հանձնաժողովի կողմից Կայանից առաքվող էլեկտրական էներգիայի (հզորության) սակագներ չեն սահմանվում, եթե Կայանը Շուկայի կանոններով սահմանված դեպքերում և կարգով էլեկտրական էներգիան (հզորությունը) վաճառում է մրցակցային պայմաններով՝ չկարգավորվող գներով:

12. Կայանի կառուցման ավարտից հետո կայանի փաստացի տեղակայված (դրվածքային) հզորությունը կամրագրվի սույն լիցենզիայում:

4. ԼԻՑԵՆԶԱՎՈՐՎԱԾ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

13. Լիցենզավորված անձի գործունեությունը պետք է համապատասխանի «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, այլ օրենքների, սույն լիցենզիայի, Ցանցային կանոնների, Առևտրային կանոնների, Հանձնաժողովի կողմից ընդունված և այլ իրավական ակտերի պահանջներին:

14. Լիցենզավորված անձի կողմից Կայանի կառուցումը և շահագործումն իրականացվում է համաձայն էլեկտրակայանի նախագծային փաստաթղթերով նախատեսված սխեմայի՝ բացառությամբ օրենսդրությամբ նախատեսված դեպքերի:

15. Լիցենզավորված անձը ոչ ուշ, քան մինչև /լրացվում է համաձայն ՊՄԳ գործարքի/ պարտավոր է Հանձնաժողով ներկայացնել Կայանի կառուցման՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխան փորձաքննություն անցած նախագիծը՝ դրական փորձագիտական եզրակացություններով:

16. Լիցենզավորված անձը պարտավոր է մինչև սույն լիցենզիայով սահմանված կառուցման ժամանակահատվածի ավարտը Հանձնաժողով ներկայացնել էլեկտրակայանի կառուցման ավարտը հավաստող՝ Հանձնաժողովի սահմանա

կարգով պահանջվող փաստաթղթերը, իսկ էլեկտրական էներգիայի վաճառքի մտադրության դեպքում՝ նաև էլեկտրական էներգիայի սակագնի սահմանման հայտ՝ համաձայն Հանձնաժողովի սահմանած կարգի:

17. Լիցենզավորված անձը շուկայի օպերատորի հաշվառմանն է ներկայացնում մեծածախ շուկայում կնքված, ինչպես նաև էլեկտրական էներգիայի (հզորության) արտահանում նախատեսող պայմանագրերը՝ համաձայն Շուկայի կանոնների:

18. Լիցենզավորված անձը պարտավոր է կատարել էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատորի հրահանգները՝ համաձայն Ցանցային կանոնների:

19. Լիցենզավորված անձի 25 և ավելի տոկոս բաժնեմասի (բաժնետոմսի, փայի) կամ դրա նկատմամբ իրավունքի օտարման, այլ կերպ փոխանցման, գրավադրման, ինչպես նաև Լիցենզավորված անձի որոշումները կանխորոշելու հնարավորություն տվող բաժնեմասի (բաժնետոմսի, փայի)՝ անկախ քանակից, օտարման, այլ կերպ փոխանցման կամ գրավադրման դեպքում Լիցենզավորված անձը պարտավոր է Հանձնաժողովի սահմանած կարգով նախապես ստանալ Հանձնաժողովի համաձայնությունը:

20. Լիցենզավորված գործունեության իրականացման համար անհրաժեշտ հիմնական գույքի կամ դրա նկատմամբ իրավունքի օտարման, այլ կերպ փոխանցման կամ գրավադրման համար Լիցենզավորված անձը պարտավոր է Հանձնաժողովի սահմանած կարգով նախապես ստանալ Հանձնաժողովի համաձայնությունը:

21. Սույն լիցենզիան չի կարող այլ անձանց օգտագործման տրվել, օտարվել կամ գրավադրվել, իսկ դրանով ամրագրված էլեկտրական էներգիայի արտադրության գործառույթը որևէ ձևով փոխանցվել այլ անձի, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

22. Սույն լիցենզիայի գործողությունը չի տարածվում Լիցենզավորված անձի հետ համատեղ, այդ թվում՝ համատեղ գործունեության պայմանագրով գործունեություն իրականացնող այլ անձանց, ինչպես նաև Լիցենզավորված անձի մասնակցությամբ հիմնադրված կամ գործող իրավաբանական անձանց վրա:

23. Լիցենզավորված անձը պարտավոր է ապահովել լիցենզավորված գործունեության իրականացման համար անհրաժեշտ և այդ գործունեության մեջ ներգրավված գույքի հասանելիությունը Հանձնաժողովի ներկայացուցիչների համար:

24. Լիցենզավորված անձի կողմից իրականացվող տնտեսական այլ գործունեությունը չպետք է վտանգի սույն լիցենզիայի պայմանների պատշաճ կատարումը, իսկ լիցենզավորված գործունեության հաշվապահական հաշվառումը պետք է առանձնացված լինի Լիցենզավորված անձի կողմից իրականացվող այլ գործունեության հաշվապահական հաշվառումից:

25. Լիցենզավորված անձը պարտավոր է Հանձնաժողովի կողմից սահմանված կարգերին և ձևերին համապատասխան լիցենզավորված գործունեության մասին տեղեկատվություն և հաշվետվություններ ներկայացնել Հանձնաժողով:

26. Լիցենզավորված անձը պարտավոր է Հանձնաժողովի պահանջով ներկայացնել լիցենզավորված գործունեության վերաբերյալ սպառիչ տեղեկատվություն, ինչպես նաև պատասխանել Հանձնաժողովի գրավոր հարցադրումներին 10 աշխատանքային օրվա ընթացքում, եթե Հանձնաժողովի կողմից այլ ժամկետներ սահմանված չեն:

27. Լիցենզավորված անձը պարտավոր է յուրաքանչյուր տարի իրականացնել նախորդ տարվա ֆինանսական հաշվետվությունների աուդիտ և աուդիտորական եզրակացությունն ստանալուց հետո, իսկ տարեկան հաշվետվությունը բաժնետերերի կամ մասնակիցների ընդհանուր ժողովի կողմից հաստատվելու դեպքում՝ դրանց հաստատումից հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, աուդիտորական եզրակացության և աուդիտ իրականացված ֆինանսական հաշվետվությունների պատճենները ներկայացնել Հանձնաժողով, ինչպես նաև հրապարակել Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների <http://www.azdarar.am> կայքում:

28. Լիցենզավորված անձը պատասխանատվություն է կրում Հանձնաժողով ներկայացրած լիցենզավորված գործունեության մասին հաշվետվությունների և այլ տեղեկատվության հավաստիության համար:

29. Լիցենզավորված անձի կողմից Հանձնաժողով ներկայացված տեղեկատվությունը հրապարակային է, եթե դա Լիցենզավորված անձի կողմից չի համարվում գաղտնի և նշված չի որպես «ընկերությանը վերաբերող գաղտնապահական տեղեկատվություն»: Լիցենզավորված անձի ներկայացրած գաղտնապահական տեղեկատվության հետ կապված հարցերը կարգավորվում են «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և այլ իրավական ակտերով:

30. Լիցենզավորված անձը պարտավոր է Հանձնաժողովին անմիջապես հայտնել այն հանգամանքների մասին, որոնք հանգեցրել են սույն լիցենզիայի պայմանների խախտումների կամ կարող են դառնալ սույն լիցենզիայի պայմանների խախտումների անմիջական պատճառ:

31. Սույն լիցենզիայի պայմաններով նախատեսված իրազեկումը, այդ թվում փաստաթղթերի հանձնումը, կատարվում է օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:

5. ԼԻՑԵՆԶԱՎՈՐՎԱԾ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀՄԿՈՒՄԸ

32. Լիցենզավորված գործունեության վերահսկումն իրականացնում է Հանձնաժողովը:

33. Լիցենզավորված գործունեության վերահսկումն ապահովելու նպատակով Հանձնաժողովի ներկայացուցիչներն ունեն ազատ մուտքի իրավունք Լիցենզավորված անձի տարածք՝ Հանձնաժողովի սահմանած կարգով:

34. Լիցենզավորված անձը վերահսկման իրականացման ընթացքում պետք է աջակցի Հանձնաժողովին՝ անհրաժեշտության դեպքում տրամադրելով համապատասխան փաստաթղթեր:

6. ՏՈՒԺԱՆՔՆԵՐԸ

35. Լիցենզավորված անձի կողմից «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթները, Հանձնաժողովի ընդունած իրավական ակտերը, սույն լիցենզիայի պայմանները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքերում Հանձնաժողովն իրավասու է տալու խախտումները վերացնելու վերաբերյալ հանձնարարականներ և կարող է կիրառել տուժանքների հետևյալ տեսակները՝

- 1) նախազգուշացում.
- 2) օրենքով սահմանված տուգանքներ.
- 3) լիցենզիայի գործողության կասեցում.
- 4) լիցենզիայի գործողության դադարեցում:

36. Լիցենզավորված անձի կամ Հանձնաժողովի նախաձեռնությամբ սույն լիցենզիայի գործողությունը դադարեցնելու դեպքում Հանձնաժողովը և Լիցենզավորված անձը ղեկավարվում են «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

37. Լիցենզավորված անձը սույն լիցենզիայի պայմանների 35-րդ կետում նշված խախտումների համար պատասխանատվություն չի կրում, եթե դրանք հետևանք են ֆորս մաժորի: Սույն լիցենզիայի պայմանների իմաստով ֆորս մաժոր է համարվում ցանկացած հանգամանք կամ դեպք (դրա հետևանք), որը հանգեցրել է (հանգեցնում կամ կարող է հանգեցնել) Լիցենզավորված անձի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման և միաժամանակ բավարարում է հետևյալ պայմաններին՝

- 1) չի գտնվում Լիցենզավորված անձի վերահսկողության ներքո.
- 2) Լիցենզավորված անձը ձեռնարկել է բոլոր անհրաժեշտ միջոցները և ջանքերը (այդ թվում՝ նախազգուշական, այլընտրանքային, օրենսդրությամբ նախատեսված) նշված հանգամանքները (հետևանքները) կանխելու, վերացնելու, մեղմելու կամ դրանցից խուսափելու համար.
- 3) Լիցենզավորված անձը տեղեկացրել է Հանձնաժողովին իրազեկվելուց հետո հնարավորինս սեղմ ժամկետում, բայց ոչ ուշ, քան այդ մասին իրազեկվելուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում:

38. Սույն լիցենզիայի պայմանների իմաստով, մասնավորապես, ֆորս մաժոր են՝

- 1) բնական և տեխնաժին աղետները, համաճարակները, բնության ուժերի արտասովոր դրսևորումները (այդ թվում՝ ջրհեղեղներ, երկրաշարժեր, փոթորիկներ, պտտահողմեր, կայծակով և ամպրոպով ուղղորդվող հորդառատ անձրևներ, ձնաբքեր, սողանքներ), ատոմային, քիմիական կամ կենսաբանական աղտոտում, գործադուլները, հասարակական անկարգությունները.

- 2) ապստամբությունները, ահաբեկչությունները, պատերազմները, ներխուժումները, զինված հակամարտությունները, արտաքին թշնամու գործողությունները կամ շրջափակումը, որոնցից յուրաքանչյուրը տեղի է ունենում Հայաստանի Հանրապետության տարածքում, կամ ներգրավում է այն, ինչը գոյություն չի ունեցել կամ չէր կարող ողջամտորեն կանխատեսվել:
- 3) պետական և տեղական ինքնակառավարման մարմնի կամ այլ իրավասու կազմակերպության ակտը, գործողությունը կամ անգործությունը այն դեպքում, երբ դրա արդյունքում չի տրամադրվել, չի երկարաձգվել սույն լիցենզիայով ամրագրված պարտավորության կատարման համար անհրաժեշտ որևէ թույլտվություն կամ իրավունք կամ խոչընդոտվել է այդ պարտավորության կատարումը, պայմանով, որ Լիցենզավորված անձը գործել է համաձայն Հայաստանի Հանրապետության օրենսդրության:

39. Սույն լիցենզիայի պայմանների 38-րդ կետը չի սահմանափակում Լիցենզավորված անձի իրավունքը նկարագրվածից բացի այլ արտակարգ և անկանխելի դեպքեր ու հանգամանքներ ի հայտ գալու պարագայում դիմել Հանձնաժողով՝ սույն գլխի պահանջներին բավարարելու դեպքում դրանք ևս ֆորս մաժոր ճանաչելու համար:

7. ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

40. Սույն լիցենզիայում փոփոխություններ կարող են կատարվել Լիցենզավորված անձի կամ Հանձնաժողովի նախաձեռնությամբ՝ Հանձնաժողովի կողմից սահմանված կարգով:

41. Հանձնաժողովի նախաձեռնությամբ սույն լիցենզիայի փոփոխությունները կատարվում են Լիցենզավորված անձի համաձայնությամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ նախատեսվող փոփոխություններն անհրաժեշտ են Հայաստանի Հանրապետության օրենքների և նորմատիվ իրավական ակտերի պատշաճ կատարումն ապահովելու համար:

42. Լիցենզավորված անձի վերակազմակերպման կամ նրա անվանման կամ գտնվելու վայրի փոփոխման դեպքում Լիցենզավորված անձը պարտավոր է այդ փոփոխություններն իրավական ուժ ստանալու օրվանից սկսած 15 օրյա ժամկետում սույն լիցենզիայի վերաձևակերպման հայտ ներկայացնել Հանձնաժողով, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

(ընկերության անվանումը)

(գտնվելու վայրը)

Հավելված №1

Էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության ԼԷ №0---
լիցենզիայի պայմանների

ՍԱԿԱԳՆԵՐ ԵՎ ՍԱԿԱԳՆԵՐԻ ՃՇԳՐՏՈՒՄՆԵՐ

- Սույն հավելվածը սահմանում է յուրաքանչյուր Հաշվարկային ժամկետի համար
Էլեկտրական էներգիայի սակագնի հաշվարկը:

2. Հայաստանի Հանրապետության օրենսդրության մեջ փոփոխություն կատարելու դեպքում, որը Լիցենզավորված անձի համար կառաջացնի սույն լիցենզիայի պայմաններով սահմանված գործունեությանն առնչվող ծախսերի ավելացում կամ նվազեցում՝ որևէ Հաշվարկային ժամկետում 30 միլիոն կամ երկու և ավելի Հաշվարկային ժամկետների համար աճողական 60 միլիոն (առանց հաշվի առնելու նախկինում փոխհատուցված մեծությունը) դրամ և ավելի չափով, ապա սույն հավելվածի 4-րդ կետում նշված T_B մեծությունը պետք է ճշգրտվի այնպես, որ Լիցենզավորված անձը պահպանի նույն ֆինանսական վիճակը, որը կունենար Հայաստանի Հանրապետության օրենսդրության փոփոխության բացակայության դեպքում:
3. Սույն հավելվածի համաձայն՝ Էլեկտրական էներգիայի սակագինը հաշվարկվում է տարեկան կտրվածքով Էլեկտրական էներգիայի սակագնի սահմանման վերաբերյալ Հանձնաժողովի առաջին որոշումն ուժի մեջ մտնելու պահից 20 տարվա ընթացքում:
4. Էլեկտրակայանի կառուցման ավարտից հետո Հանձնաժողովը Լիցենզավորված անձի հայտի հիման վրա սահմանում է հաշվարկային առաջին ժամկետի համար Էլեկտրական էներգիայի սակագինը համաձայն հետևյալ բանաձևի.

$$T_1 = T_B * E_1$$

որտեղ՝

T_1 -ն հաշվարկային առաջին ժամկետի համար Էլեկտրական էներգիայի սակագինն է (դրամ/կՎտժ),

T_B -ն Կայանի նախագծման, ֆինանսավորման, կառուցման, տնօրինման և շահագործման համար կազմակերպված մրցույթի արդյունքում ձևավորված՝ Լիցենզավորված անձի կողմից առաքվող Էլեկտրական էներգիայի սակագինն է, որը հավասար է */լրացվում է մրցույթի արդյունքում ձևավորված սակագինը/*,

E_1 -ը Հաշվարկային առաջին ժամկետի համար սակագնի սահմանման նպատակով Լիցենզավորված անձի կողմից Հանձնաժողովին հայտի ներկայացման ամսվան նախորդող ամսվա պաշտոնական փոխարժեքի ամսական միջին թվաբանականն է (ՀՀ դրամ/ԱՄՆ դոլար):

5. Հաշվարկային երկրորդ ժամկետից սկսած Հանձնաժողովը Էլեկտրական էներգիայի սակագինը հաշվարկում և սահմանում է՝ համաձայն հետևյալ բանաձևի.

$$T_i = T_B * E_i + \Delta T_i * (1 + d) ,$$

որտեղ՝

T_i-ն i-րդ Հաշվարկային ժամկետի համար Էլեկտրական Էներգիայի սակագինն է (դրամ/կՎտժ),

E_i-ն Պաշտոնական փոխարժեքի ամսական միջին թվաբանականն է՝ i-րդ Հաշվարկային ժամկետի Ներկայացման ամսվան նախորդող ամսվա համար (ՀՀ դրամ/ԱՄՆ դոլար):

ΔT_i-ն i-րդ Հաշվարկային ժամկետի համար Էլեկտրական Էներգիայի սակագնի ճշգրտման մեծությունն է (դրամ/կՎտժ), որը պայմանավորված է նախորդ «i-1» Հաշվարկային ժամկետի ընթացքում Պաշտոնական փոխարժեքի փոփոխությամբ և Սղաճով:

d-ն լրացուցիչ ճշգրտման գործակիցն է, որը հավասար է 0.12,

6. Սկսած երկրորդ Հաշվարկային ժամկետից կատարվում է Էլեկտրական Էներգիայի սակագնի ճշգրտում՝ պայմանավորված նախորդ Հաշվարկային ժամկետում Պաշտոնական փոխարժեքի փոփոխությամբ և Սղաճով: Ճշգրտման ընդհանուր մեծությունը (ΔT_i) որոշվում է հետևյալ բանաձևով.

$$\Delta T_i = T_{i-1} (K_1 * (KE_i - 1) + K_2 * (KI_i - 1)),$$

որտեղ՝

T_{i-1}-ն «i-1»-րդ Հաշվարկային ժամկետի համար Էլեկտրական Էներգիայի սակագինն է (դրամ/կՎտժ):

K₁-ը գործող սակագնի այն մասն է, որը ենթակա է ճշգրտման Պաշտոնական փոխարժեքի փոփոխությամբ պայմանավորված և ընդունվում է հավասար 0.9-ի,

KE_i-ն i-րդ Հաշվարկային ժամկետի համար i-1-րդ Հաշվարկային ժամկետում Պաշտոնական փոխարժեքի փոփոխությամբ պայմանավորված Էլեկտրական Էներգիայի սակագնի ճշգրտման գործակիցն է, որը հաշվարկվում է սույն հավելվածի 7-րդ կետի համաձայն,

K₂-ը գործող սակագնի այն մասն է, որը ենթակա է ճշգրտման Սղաճով և ընդունվում է հավասար 0.1-ի,

KI_i-ն i-րդ Հաշվարկային ժամկետի համար i-1-րդ Հաշվարկային ժամկետում Սղաճով պայմանավորված Էլեկտրական Էներգիայի սակագնի ճշգրտման գործակիցն է, որը հաշվարկվում է սույն հավելվածի 8-րդ կետի համաձայն:

7. Պաշտոնական փոխարժեքի փոփոխությամբ պայմանավորված էլեկտրական էներգիայի սակագնի ճշգրտման գործակիցը (KE_i) որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$KE_i = \frac{\sum_{j=1}^{j=12} \left(W_j^{i-1} * \frac{E_j^{i-1}}{E_{i-1}} \right)}{\sum_{j=1}^{j=12} W_j^{i-1}}$$

որտեղ՝

KE_i -ն i -րդ Հաշվարկային ժամկետի համար $i-1$ -րդ Հաշվարկային ժամկետում Պաշտոնական փոխարժեքի փոփոխությամբ պայմանավորված էլեկտրական էներգիայի սակագնի ճշգրտման գործակիցն է,

W_j^{i-1} -ն $i-1$ -րդ Հաշվարկային ժամկետում j -րդ օրացուցային ամսվա ընթացքում Լիցենզավորված անձի կողմից առաքված էլեկտրական էներգիայի քանակն է (կՎտժ),

E_j^{i-1} -ն $i-1$ -րդ Հաշվարկային ժամկետում j -րդ օրացուցային ամսվա համար հաշվարկված Պաշտոնական փոխարժեքի միջին թվաբանականն է (ՀՀ դրամ/ԱՄՆ դոլար),

E_{i-1} -ն $i-1$ -րդ Հաշվարկային ժամկետի Ներկայացման ամսվան նախորդող օրացուցային ամսվա համար հաշվարկված Պաշտոնական փոխարժեքի միջին թվաբանականն է (ՀՀ դրամ/ԱՄՆ դոլար):

8. Սղաճով պայմանավորված էլեկտրական էներգիայի սակագնի ճշգրտման գործակիցը (KI_i) որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$KI_i = \frac{I_i}{100}$$

որտեղ՝

KI_i -ն i -րդ Հաշվարկային ժամկետի համար $i-1$ -րդ Հաշվարկային ժամկետում Սղաճով պայմանավորված էլեկտրական էներգիայի սակագնի ճշգրտման գործակիցն է

I_i -ը ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության կողմից հրապարակվող Ներկայացման ամսվան նախորդող (եթե հնարավոր չէ, ապա դրան նախորդող) ամսվա Սղաճն է նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ:

9. Սույն հավելվածում նշված էլեկտրաէներգիայի սակագնի հաշվարկները չեն ներառում ավելացված արժեքի հարկը:

